64. The Cambridge Companion to the Trinity, ed. by **Peter C. Phan**, Cambridge: Cambridge University Press, 2011.
65. The Oxford Handbook of Philosophical Theology, edited by **Thomas P. Flint**, Oxford: Oxford University Press, 2009.
66. The Oxford Handbook of Systematic Theology, edited by **Kathryn Tanner, John Webster, and Iain Torrance**, Oxford: Oxford University Press, 2009.
67. The Oxford Handbook of the Trinity, edited by **Gilles Emery, O. P. and Matthew Levering**, Oxford: Oxford University Press, 2011.
68. **William G. T. Shedd**, Dogmatic theology, Charleston, S.C.: Forgotten Books, 2011.

Գ. ԶՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

-Բարոյագիտության ոլորտը, կառուցվածքը, սահմանները, ներքին բաժանումները. բարույք, էթիկա, բարոյագիտություն, բարի-չար, ճիշտ-սխալ, վատ-լավ, բարոյական, ոչ-բարոյական, անբարոյական և ապաբարոյական հասկացությունները: Էթիկայի ճյուղերը: Զրիստոնեական բարոյագիտություն, առարկայի սահմանումը, թեմաները, տեղն աստվածաբանության մեջ:

-Բացարձակ, հարաբերական և ոչ-կոգնիտիվ մոտեցումներ. բազմազանություն և հարաբերականություն. էթիկական քննարկման նախապայմանները և դրանում ազդող գործոնները. դետերմինիզմ և ազատություն. իրավունք և պատասխանատվություն:

-Պատական հունական էթիկա. Սոկրատ: Պլատոնի էթիկական հայացքները: Արիստոտելի քննական էթիկան: Էպիկուրյան և ստոյիկյան էթիկական հայացքներ:

-Բնական բարոյական օրենքի տեսությունը. բնական օրենքի տեսության հունա-հելլենիստական հիմքերը: Թոմաս Աքվինացու բարոյագիտական համակարգը. բանականության դերը, իրական և երևութական բարին, արտաքին և ներքին գործողություններ, առաջնային և երկրորդական հրահանգներ (prima secundum): Կազուիստական էթիկա, առաքինություններ:

-Պայմանագրային տեսություններ. օրենք և սոցիալական պայմանագիր՝ Հոբսի, Լոկի և Ռուսոյի հայացքները: Սոցիալական դաշինքը և իրավունքը որպես էթիկայի հիմք:

-Ուտիլիտարիզմ. Բենթամի և Միլի սոցիալական և էթիկական հայացքները, ուտիլիտարիզմի տեսությունը: Գործողության և կանոնի ուտիլիտարիզմ: Նախընտրության և շարժառիթի ուտիլիտարիզմ:

-Վեոնտոլոգիա. Կանտը և «Է-պետք է» (Is-Ought) անցումը: Գերագույն բարին (summum bonum): Բարոյական օրենքը իբրև ապրիորի-սինթետիկ իրողություն: Բարի կամեցողություն և շարժառիթ: Կատեգորիկ իմպերատիվ ձևակերպումները. երեք պոստուլատները:

-Իրավիճակային էթիկա. կազուխատական էթիկան իբրև իրավիճակային էթիկայի նախընթաց: Ֆլետչըրի ազապեիզմը: Քրիստոնեական արմատական սիրո հիմնարար սկզբունքը: Ազապեիզմի կանխադրույթներն ու դրույթները:

-Նատուրալիզմ և ինտուիցիոնիզմ, էմոտիվիզմ և պրեսկրիպտիվիզմ. էթիկական նատուրալիզմ և «նատուրալիստական սխալը»: Ինտուիցիոնիզմի տեսությունը՝ Փրիչարդ և Ռոս: Էմոտիվիզմ կամ էթիկական ոչ-նատուրալիզմ՝ Այեր և Սթիվընսըն: Պրեսկրիպտիվիզմ՝ Հեր:

-Առաքինության էթիկա. առաքինություններն ըստ Պատոնի և Արիստոտելի: Առաքինությունները քրիստոնեական միջնադարյան բարոյագիտության մեջ: Առաքինության էթիկայի վերազարթոնքը Ի. դարում՝ Մաքհնթայր: Առաքինության էթիկայի առանձնահատուկ նկարագիրը: Ֆեմինիստական էթիկա:

-Խիղճ. Օգոստինոսն ու Աքվինացին խղճի մասին: Բաթլըրի ինտուիտիվ մոտեցումը: Էկզիստենցիալիզմ և էթիկա՝ բարոյական նորմերի առկախումը: Ֆեմինիստական ուղղություններ:

-Էթիկա և կրոն. էթիկայի և կրոնի փոխհարաբերության մոդելները: Կրոնական հեղինակությունը և «աստվածային հրահանգի» էթիկան: Քրիստոնեական և այլ կրոնների բարոյագիտական հայացքները:

-Աշխարհիկ էթիկա. Էգոիզմի տարատեսակները: Հումանիզմ: Այտրուիզմ կամ այլասիրություն:

-Ընդհանուր բարոյագիտություն, մարդկային կյանքի նպատակը. բարին, բարին՝ նպատակակետ կյանքի, բարին քրիստոնեական մտածողության և ուսմունքի մեջ:

-Մարդկային արարքը. արարքի սահմանումը, մտքի վկայությունը մարդ անհատի գործերում, դիտավորություն, պատասխանատվություն:

-Մարդկային ազատությունը. ազատության սահմանումը, Քրիստոսի հայացքը ազատության մասին, ազատություն - անիշխանություն, ազատություն - հնազանդություն:

-Մարդկային խիղճը. ի՞նչ է խիղճը, սահմանում, խիղճը զանազանիչ բարու և չարի, խիղճը՝ ձայն Աստծո, խղճի տարբեր տեսակները:

-Օրենք. սահմանում, օրենքի բաժանումները, բնական օրենքներ, դրական-սահմանված օրենքներ, Հին կամ մովսիսական օրենքներ, Նոր կամ քրիստոնեական օրենքներ, մարդկային օրենքներ:

-Առաքինություն. սահմանում, բնական առաքինություններ, գերբնական առաքինություններ, աստվածային կամ ավագ առաքինություններ, բարոյական առաքինություններ:

-Մոլություն. սահմանում, փորձություն, գլխավոր մոլություններ, մահացու մեղքեր, մեղաց խոստովանություն, կարգը և բովանդակությունը:

-Հավատք. սահմանում, մարդու կյանքն իր Արարչի հանդեպ, հավատքի անհրաժեշտությունը, հավատքի առարկան, հավատք և բանականություն:

-Հույս. սահմանում, հույսի առարկան, հույսի հիմնական նախապայմանը, հույսի դերը մարդ անհատի կյանքում:

-Մեր. սահմանում, սիրո կարևորությունն ու վեհությունը, սիրո առարկան, սիրո պսակը:

-Աղոթք. սահմանում, աղոթքի պարունակությունը, աղոթքի տեսակները, աղոթքի արտաքին պայմանները:

Գրականություն

1. **Աուրելիո Ֆերնանդես**, Բարոյախոսության հիմունքներ. աստվածաբանական ներածություն, «Էջմիածին» ամսագիր, 2016 թ, ԺԱ:
2. **Գարեգին Ա.**, Քրիստոնեական բարոյագիտություն, Երկեր, Հատոր Գ., Կանադա, 2005:
3. **Եղիշե արք. Գուրեան**, Բարոյագիտություն, Երուսաղեմ, 1936:
4. **Կիրիլ Պատրիարք**, Ազատություն և պատասխանատվություն, Ս. Էջմիածին, 2009.
5. **Նորման Գայսլեր**, Քրիստոնեական էթիկա: Արդի հիմնախնդիրներ և ընտրանքներ, Երևան 2019:
6. **Սարգիս Քեհեաեան**, Բարոյագիտություն. փիլիսոփայական ակնարկ, Ս. Էջմիածին 2018.
7. **Սր. Պախիոս Աթոսացի**, Կրքեր և առաքինություններ, խմբ., թարգմ.՝ Էդգար սրկ. Ծատուրյան, Երևան, 2015.
8. Սուրբ Հայրերի վարքն ու կենցաղավարությունը (Վարք հարանց), թարգմանություն գրաբարից, Ս. Էջմիածին, 2016
9. **Арх. Платон (Игумнов)**, Православное нравственное богословие, М. 1994.
10. **Бальтазар Г.У. фон; Ратцингер Й. (Бенедикт XVI); Шюрман Х.**, Принципы христианской этики, Пер. с нем., М., 2007.
11. **Кристофер Райт**, Око за око - Этика Ветхого Завета, Черкассы: Коллоквиум, 2010.
12. **Роджер Крук**, Основы христианской этики, Пер. с англ. Д. и Е. Ватуля - М.: Триада, 2005.
13. **Хосе Мария Вегас**, Основы христианской этики, СПб.: Изд-во С.-Петербур. унта, 2007.
14. **Adolf Wuttke; John Power Lacroix**, Christian ethics, Whitefish, MT.: Kessinger Publishing, 2007.
15. **David Elliot**, Hope and Christian ethics, New York, NY, USA: Cambridge University Press, 2017.
16. **D. Stephen Long**, Christian ethics, Oxford: Oxford Univ. Press, 2010.
17. **Edward C. Gardner**, Justice and Christian ethics, Cambridge: Univ. Pr., 2010.
18. Ethics in Practice: An Anthology, edited by **Hugh LaFollette**, Blackwell 1999.
19. **James I. H. McDonald**, Biblical interpretation and Christian ethics, Cambridge, UK; New York: Cambridge University Press, 2005.
20. **James I. H. McDonald; Ruth Harvey**, Christian values: theory and practice in Christian ethics today, Edinburgh: T & T Clark, 1995.
21. **Michael E. Allsopp**, Models of Christian ethics, Scranton: University of Scranton Press, 2003.
22. New dictionary of Christian ethics & pastoral theology, ed. by **David John Atkinson; David Field; Arthur F Holmes; Oliver O'Donovan**, Downers Grove, Ill.: IVP, 1995.
23. **Norman L. Geisler**, Christian ethics: contemporary issues & options, Grand Rapids, Mich.: Baker Academic, 2010.
24. **Paul J. Scherz**, Science and Christian ethics, Cambridge Cambridge University Press, 2019.
25. **R. C. Mortimer**, Christian ethics, London: Routledge, 2016.
26. **Samuel Wells**, Christian ethics: an introductory reader, Chichester, West Sussex, U.K.; Malden, Mass.: Wiley-Blackwell, 2010.

27. **Stanley S. Harakas**, *Living the Faith: The Praxis of Eastern Orthodox Ethics*, Minneapolis, MN: Light and Life, 1993.
28. *The Blackwell Companion to Christian Ethics*, edited by **Stanley Hauerwas and Samuel Wells**, London: Blackwell, 2004.
29. *The Oxford Handbook of Practical Ethics*, edited by **Hugh LaFollette**, Oxford: Oxford University Press, 2003.

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. ԴԱՎԱՆԱՆՔԻ ԵՎ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ա. «Քրիստոնեական վարդապետական մտքի պատմություն»

-Վաղ Եկեղեցին և նրա զարգացման կրոնամշակութային համատեքստերը. վաղ քրիստոնեական մտքի պատմության պարբերացումը՝ հուդայական, հելլենիստական և հռոմեական մշակութային համատեքստերը: Եկեղեցին և վաղ քրիստոնեական մտքի զարգացումը խոշոր քրիստոնեական կենտրոններում՝ Երուսաղեմ, Անտիոք, Հռոմ, Եփեսոս, Ասորիք և Ալեքսանդրիա:

-Վաղ Եկեղեցին և քրիստոնեական վարդապետական միտքը Բ. դարում. հուդայական և հելլենական քրիստոնյաներ: Առաքելական հայրեր. քրիստոնեական վարդապետական մտքի ընդհանուր առանձնահատկությունների ուրվագիծ: Բ. դարի կես – Բ. դարի վերջի ջատագով հայրերի ստեղծած աստվածաբանական համակարգերը: Հուդայական և հելլենիստական կրոնամշակութային համակարգերի ազդեցությունների վերջնական ամրագրումը: Բ. դարի քրիստոնեական ադանդներն ու հերետիկոսական շարժումները. վաղ քրիստոնեական ուղղափառ պատասխանը Իրինեոս Լուգդոնացու կողմից: Առաքելական ավանդության ստեղծումը:

-Գ. դարում առաջացած Սուրբգրային կանոնի վերջնականացումը. սուրբգրային մեկնություն և վարդապետություն: Յոթանասնից թարգմանության դերը: Ալեգորիա և մեկնողական նորմերի առաջացումը վարդապետական մտքի զարգացման պատմության մեջ:

-Բ.-Դ. դարերում քրիստոնյաների դեմ հալածանքները և դոնատիստական հերձվածին տրված քրիստոնեական ուղղափառ պատասխանը: Քրիստոնեական առաջին քաղաքական աստվածաբանությունները. Եվսեբիոս Կեսարացու «Կոնստանդինի կյանքը», Օգոստինոսի «Աստծո քաղաքը» և դրանց միջնադարյան հետևորդները: Քրիստոնեական եկեղեցու խորհրդական և վանական կյանքը վաղ և զարգացած միջնադարում: Դիդակտիկ, Հուստինոս Վկայի, Տերտուղիանոսի, Առաքելական ավանդության և Կյուրել Երուսաղեմացու վկայությունները Ա. – Դ. դարերում:

-Խորհրդական կյանքի մասին վեճերը զարգացած միջնադարում Արևելքում ու Արևմուտքում: Արևելյան և Արևմտյան վանականությունների տարբերությունները և դրանց արտահայտումը վաղ քրիստոնեական ու զարգացած միջնադարի վարդապետական մտքի վրա: Արևելյան և Արևմտյան ազգային քրիստոնեական ավանդությունների ստեղծումը. Հայ, վրաց, դպտի, ասորական, եթովպական, անգլո-սաքսոն և գոթական քրիստոնեական ավանդությունները:

-Բ.-Գ. դարերի քրիստոնեական միտքը. Երրորդաբանություն և քրիստոսաբանություն. Ասիական և հռոմեական մոնարխիականությունը, սաբելական մոդալիզմը: Երկաստիճան լոգոսի աստվածաբանությունը՝ Թեոփիլոս, Տերտուղիանոս, Հիպոլիտոս: Գ.-Դ. դարերի երրորդաբանական և քրիստոսաբանական վեճերի առաջացումն ու զարգացումը՝ Թեոսիս, արիոսականություն, հոմոուսիոս, հետերուսիոս, հոմոյոուսիոս, հոգեմարտություն:

-Դ. դարի երրորդաբանական և քրիստոսաբանական վեճերին տրված ուղղափառ պատասխանները՝ Տիեզերական ու տեղական ժողովներ: Օգոստինոսը և Արևմտյան աստվածաբանության զարգացման հիմնական թեմաները՝ երրորդաբանություն,

պելագիականություն և Ս. Հոգու մասին ուսմունքի առաջին ձևակերպումը: Դ.-Ե. դարերի քրիստոսաբանական վեճերը և Քաղկեդոնի ժողովի պատճառած պառակտումը:

-Արևմտյան և Արևելյան քրիստոնեական ավանդությունների վերջնական տարբերակումը: Պապական իշխանություն /Արևմուտք/ և Կեսարոպապիզմ /Արևելյան Բյուզանդական կայսրություն/: Իսլամի զարգացում, Արևմտյան քրիստոնեական կայսրության հզորացում, հերձված Արևելքի ու Արևմուտքի միջև: Խաչակրաց արշավանքներ: ԺԱ.-ԺԳ. դարերի սքոլաստիկ աստվածաբանության զարգացումը: Առաջին արևմտաեվրոպական համալսարանների հիմնումը և դավանաբանության զարգացումը: Բյուզանդական աստվածաբանության հիմնական թեմաներն ու զարգացման առանձնահատկությունները: Հովհան Դամասկացին և Գրիգոր Պալամացին իբրև զարգացաց միջնադարի բյուզանդական աստվածաբանության սկիզբ և վերջ:

-ԺԵ.-ԺԶ. դարերի Բարեփոխությունն ու եվրոպական աստվածաբանության զարգացումը: Կաթոլիկ բարեկարգումն ու նոր աստվածաբանական ուղղությունների զարգացումը: Եվրոպական Վերածնունդն ու Լուսավորական շարժումը և Արևմտյան աստվածաբանության զարգացումը ԺԶ.-ԺԸ. դարերում: Քրիստոնեական աստվածաբանության զարգացումը նոր և նորագույն ժամանակներում (ԺԹ.-ԻԱ. դարերի կաթոլիկ, բողոքական և օրթոդոքս հիմնական աստվածաբանական ուղղությունների ու նշանավոր ներկայացուցիչների ընդհանուր ուրվագիծ):

Գրականություն

1. **Երուանդ վրդ. Տեր-Մինասեանց**, Ընդհանուր եկեղեցական պատմություն, Հ. Ա., Հին Եկեղեցին, Ս. Էջմիածին, 1908 (Բ. հրատ., Ս. Էջմիածին, 2013):
2. **Երվանդ Տեր-Մինասյան**, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Երևան, 1968:
3. **Андреа Милано**, Ипостась, Лицо, Личность. Генеалогия понятия в богословии Древней Церкви, Санкт-Петербург, 2019.
4. **Лебедев А. П.**, Споры об Апостольском символе. История догматов. Исследования по истории древней Церкви, Санкт-Петербург, 2004.
5. **Лурье В. М.**, История Византийской философии. Формативный период, СПб.: Аxiōma, 2006.
6. **Хегглунд Б.**, История теологии, Санкт-Петербург, 2001.
7. **Ярослав Пеликан**, Христианская традиция. История развития вероучения. Том 1. (100 - 600), Москва, 2007.
8. **Ярослав Пеликан**, Христианская традиция. История развития вероучения. Том 2. (600-1700), Москва, 2009.
9. **Alister E. McGrath**, Historical Theology, An Introduction to the History of Christian Thought, Wiley-Blackwell, 2 ed., 2012.
10. **Cambridge History of Christianity**, Vol. 1-9, Cambridge University Press, 2008.
11. **Gregg Allison**, Historical Theology: An Introduction to Christian Doctrine, Grand Rapids, Mich: Zondervan, 2011.
12. **John Behr**, The Formation of Christian Theology. Vol. 1. The Way to Nicaea, Crestwood, New York, 2001.
13. **John Behr**, The Formation of Christian Theology. Vol. 2. The Nicene Faith. Part One: True God of True God, Crestwood, New York, 2004.

14. **John Behr**, The Formation of Christian Theology. Vol. 2 The Nicene Faith. Part Two: One of the Holy Trinity, Crestwood, New York, 2004.
15. **Martin Davie**, New dictionary of theology: historical and systematic, Downers Grove, Illinois: IVP Academic, 2016.
16. The dictionary of historical theology, ed. by **Richard Bauckham; Trevor A Hart**, Carlisle, Cumbria, UK: Paternoster Press, 2000.
17. **William C. Placher; Derek R. Nelson**, A history of Christian theology: an introduction, Louisville, KY: Westminster John Knox Press, 2013.
18. **William C. Placher; Derek R. Nelson**, Readings in the history of Christian theology. Volume 1. From its beginnings to the eve of the reformation, Louisville, Kentucky: Westminster John Knox Press, 2015.
19. **William C. Placher; Derek R. Nelson**, Readings in the history of Christian theology. From the reformation to the present, Westminster John Knox, 2017.

բ. «Հայոց Եկեղեցու վարդապետական մտքի պատմություն»

-Հայ վարդապետական մտքի ուսումնասիրության սկզբնաղբյուրները. կազմությունը, պատմականությունն ու առանձնահատկությունները: Հայ վարդապետական մտքի պարբերացումը՝ վարդապետական մտքի ուսումնասիրության համատեքստում:

-Հայոց Եկեղեցու վարդապետական մտքի վերջնական ձևավորումը. հայ դավանաբանության ժողովածուներն իբրև հիմնական սկզբնաղբյուր: Հայ թարգմանական գրականության ազդեցությունը հայ վարդապետական մտքի զարգացման վրա: Հայ-կաթոլիկ և հայ-քաղկեդոնական շարժումները, դրանց կարևորությունը հայ վարդապետական մտքի համար:

-Հայ վարդապետական մտքի ուսումնասիրության հիմնական թեմաներն ու առանձնահատկությունները: Վարդապետական գրվածքներ և վարդապետներ. առանձին աստվածաբանների թողած ազդեցությունը հայ վարդապետական մտքի վրա:

Գրականություն

1. **Աբել վարդապետ Օղլուգեան**, Համռօտ ակնարկ Հայ Եկեղեցւոյ վարդապետական աստուածաբանութեան գրականութեան, Գանձասար Դ. Հատոր, Երևան 1993:
2. **Արշակ Տէր-Միքէլեան**, Հայաստանեայց եկեղեցին և Բիւզանդական ժողովոց պարագայք, Մոսկուա, 1892:
3. **Գարեգին վրդ. Յովսէփեան**, Խոսրովիկ թարգմանիչ, Էջմիածին, 1899:
4. **Գիրք թղթոց**, Մատենագրութիւն նախնեաց, Թիֆլիս, 1901:
5. **Գրիգոր Տաթևացի**, Ոսկեփորիկ, Երևան, 1995:
6. **Երուանդ վրդ. Տէր-Մինասեանց**, Հայոց եկեղեցւոյ հարաբերությունները Ասորոց եկեղեցիների հետ, Էջմիածին, 1908 (Բ. հրատ., Ս. Էջմիածին, 2012):
7. Ընդհանրական թուղթք Սրբոյն **Ներսիսի Ծնորհալոյ**, ՅԵրուսաղէմ, 1871 (Անթիլիաս, 1974):
8. **Կնիք հաւատոյ** ընդհանուր սուրբ եկեղեցւոյ յուղղափառ և ս. Հոգեկիր հարցն մերոց ժառանգութեանց յաւուրս Կոմիտաս կաթողիկոսի համահաւաքեալ. Հրատարակութիւն

Կարապետ եպիսկոպոսի, Ս. Էջմիածին, 1914: Վերահրատարակություն՝ Անթիլիաս, 1988:

9. **Հակոբ Անասյան**, Հայկական մատենագիտություն Ե-ԺԸ դդ., Հտ. 1, Երևան, ՀՍՍՌ-հրատ., 1959:
10. Հայ թարգմանական գրականություն, երեք հատորով, Հայաստանի ազգային գրապալատ, Երևան, 2013-2021:
11. **Հակոբ Մանանդեան**, Յունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928:
12. **Վարդան Այգեկցի**, Գիրք Հաստատութեան և Արմատ Հաւատոյ, Երևան 1998:
13. **Լևոն Տեր-Պետրոսյան**, Հայ հին թարգմանական գրականությունը, Երևան, 1984
14. **Karekin Sarkissian**, A Brief Introduction to Armenian Christian Literature, Faith Press, London, 1960.

Բ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ա. «Հայ եկեղեցական մատենագրություն»

-«Հայ եկեղեցական մատենագրություն» առարկան. «Հայ եկեղեցական մատենագրության» իմաստային շերտերը և ուսումնասիրության սահմանները: Հայ միջնադարյան մատենագրության աստվածաբանական և պատմաբանասիրական լուսաբանման մեթոդաբանական սկզբունքները և ժամանակագրական սահմանները: Հայ եկեղեցական մատենագրության սկզբնակետի ու վերջնասահմանի խնդիրը: Հայ եկեղեցական մատենագրության ժանրերը: Կապը հայրախոսական գրականության հետ: Հայ եկեղեցական մատենագրության պատմական փուլերի դասակարգման մեթոդաբանական սկզբունքները և հարակից գիտությունները: Տեղը և դերն աստվածաբանության համակարգում:

-Հայ եկեղեցական մատենագրության հոգևոր հիմքերը. Ս. Գրիգոր Լուսավորչի անվամբ հայտնի երկերի հեղինակային պատկանելության հարցը: «Հանախապատում» ճառերում և «Ս. Գրիգորի վարդապետության» մեջ արծարծվող վարդապետական հարցերը: Ս. Գրիգոր Լուսավորչի անվամբ հայտնի մանր երկերը («Կանոնք», «Հարցմունք», «Սահմանադրություն կարգաց» և այլն) և դրանց վարդապետական ու գործնական նշանակությունը: Ս. Սահակ Պարթևի եկեղեցաքաղաքական գործունեությունը և բացառիկ նպաստը Հայ եկեղեցական մատենագրության ձևավորման և ամբողջացման գործին: Թարգմանական գործունեությունը: Մատենագրության (ներեկեղեցական կարգին վերաբերող Կանոններ, Ավագ շաբաթվա կարգի շարականներ, Ծիսական մատենագրությանը բերած մասնակցություն և այլն) խորհրդական բովանդակությունը: Դավանաբանական դիրքորոշումը. Պրոկղ և Ակակիոս հայրապետներին հղած թղթերը: Ս. Մեսրոպ Մաշտոցի կենսագործունեության բացառիկ կարևորությունը Հայ եկեղեցական մատենագրության մեջ: Երկերը և դրանց հեղինակային պատկանելության հետ կապված խնդիրները: «Այաշխարհության կարգի» շարականները, դրանց վարդապետական բովանդակությունը և կապը հայրախոսական ավանդույթի հետ: Ե. դարի հայ թարգմանական մատենագրությունը և դրա համակարգված բնույթը (Աստվածաշունչ, հայրախոսական [մեկնաբանական, ճառախոսական], սրբախոսական, պատմագրական, կանոնական, ծիսական երկեր):

Հունարան թարգմանությունների 4 հիմնական փուլերը: Թարգմանությունների շարժառիթը, լեզվաքերականական առանձնահատկությունները և աստվածաբանական ուղղվածությունը: **-Հայ եկեղեցական մատենագրության սկզբնավորումը և համակարգումը.** Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի սրբախոսական ավանդները: Կորյունին վերագրվող թարգմանական երկերը: Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ը որպես ջատագովական աստվածաբանության կոթողային հուշարձան: Երկում արժարժված վարդապետական խնդիրները: Եզնիկի անունով խրատների հարցը: Հովհան Մանդակունու եկեղեցաքաղաքական գործունեությունը: «Ճառեր»-ը և դրանց հեղինակային պատկանելության հարցերը: «Ճառեր»-ի վարդապետական, բարոյաբանական բովանդակությունը և աստվածաբանական արժեքը: Մանդակունու անունով մանր երկերի (Կանոններ, «Ապացույց» և այլն) աստվածաբանական արժեքը: Եղիշեի երկերի և Ճառերի (Քրիստոսի չարչարանաց և տնօրինական այլ գործերի մասին) աստվածաբանական և խորհրդաբանական արժեքը: Մովսես Խորենացու վերաբերմունքն անտիկ արժեհամակարգերի նկատմամբ: Նրա անունով հայտնի ճառերը և գանձերը: Մամբրե Վերծանողի ճառերը (Ս. Ծննդյան, Երուսաղեմ մուտք գործելու, Ղազարու հարության):

-Հայ դավանաբանական մատենագրության վաղ փուլը (Ձ.-Ը. դարեր). Ե.-Ձ. դարերի քրիստոսաբանական վեճերը և Հայոց Եկեղեցին: Անանիա Սյունեցու թարգմանական գործերը: «Ի խորհուրդ կատարմանն առաքելոյն Պետրոսի» ճառի աստվածաբանական ուղղվածությունը: Խաչի վարդապետությունը: Դավիթ Անհաղթի «Ներբող Ս. Խաչի» երկը և դրա աստվածաբանական նշանակությունը: Պետրոս Սյունեցու մատենագրության աստվածաբանական արժեքը: Կոմիտաս Աղցեցու դավանաբանական ձեռնարկումները: Վրթանես Քերթողի «Յաղագս պատկերամարտից» երկի և թղթերի աստվածաբանական բովանդակությունը: Մաթուսաղա Սյունեցու «Թուղթ հղված հունաց Հերակլ կայսրին» երկի աստվածաբանական արժեքը: Հովհաննես Մայրագումեցու դավանաբանական դիրքորոշումն ըստ «Կնիք հավատոյ» ժողովածուի և «Վերլուծություն կաթողիկե եկեղեցույ» երկի: Թեոդորոս Քոթենավորի, Մովսես Քերթողի և Դավիթ փիլիսոփա Հարքացու երրորդաբանական և քրիստոսաբանական ըմբռնումները: Անանիա վրդ. Ծիրակացու արարչաբանությունը, հանգանակաբանությունը, ճառերը և կանոնական լուծումները: Մողմոն Մաքենացու հակաճառական աստվածաբանությունը: Գրիգորիս Արշարունու «Մեկնութիւն ընթերցուածոց» երկի խորհրդաբանական և աստվածաբանական բովանդակությունը: Եկեղեցական կյանքի բարեկարգման Ս. Հովհան Օձնեցու ջանքերը: Դավանաբանական, եկեղեցաբանական և կանոնական իրավունքին վերաբերող մատենագրությունը: «Գիրք Թղթոց»-ի ամբողջացումը: Ստեփանոս Սյունեցու մեկնողական, դավանաբանական և եկեղեցաբանական երկերը: Խոսրովիկ Թարգմանչի քրիստոսաբանական երկերը և թղթերը:

-Թ.-ԺԲ. դարերի հայ աստվածաբանական գրականությունը. Սահակ Մռուտի դավանաբանական թղթերը. Չաքարիա Չազեցու աստվածաբանական ճառերը: Մաշտոց Եղիվարդեցու «խրատներ»-ը: Արտավազդ Մազազունու, Տանատ և Թովմա վարդապետների «Հարցուպատասխաններն» իբրև դարաշրջանի կրոնամշակույթային և աստվածաբանական իրավիճակի դրսևորումներ: Արամ մատենագրի «Թղթի» վարդապետական արժեքը: Խոսրով Անձնացու մատենագրական երկերը: Անանիա Մոկացու թղթերը: Հակոբ Ծպատեցին որպես եկեղեցու սրբազան ավանդության պահապան: Խաչիկ Արշարունու աստվածաբանական ըմբռնումները: Անանիա Նարեկացու խրատները, «Հաւատարմատր»-ը և հակաթոնդրակյան երկերը: Գրիգոր Նարեկացու ներբողները և գանձերը: «Մատեան ողբերգության»: Մամվել Կամբջաձորեցու և Վարդան Անեցու աստվածաբանական մատենագրությունը: Գրիգոր

Մագիստրոսի Թղթերը և չափաբերական երկերը: Անանիա Սանահնեցու «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» երկը և ճառերը: Գրիգոր Ավագ Վկայասերի մատենագրությունը: Հովհաննես Սարկավագի աստվածաբանական և դավանաբանական երկերը, աղոթքները, յուժմունքները և բարոյախրատական ճառերը: Պողոս Տարնացու դավանաբանական և եկեղեցաբանական երկերը:

-Չարգացած միջնադարի հայ դավանաբանական մատենագրությունը. Ներսես Շնորհալու թղթերը, քերթողական և թարգմանական ժառանգությունը: Գրիգոր Տղայի եկեղեցաբանական վաստակը և թղթերը: Ներսես Լամբրոնացին և դարաշրջանի միջեկեղեցական հարաբերությունները: «Ատենաբանության» աստվածաբանական նշանակությունը: Լամբրոնացու թարգմանական ժառանգությունը: Բարսեղ Մարաշեցու ողբ-դամբանականը: Վարդան Արևելցու դավանաբանական երկերը, ճառերը և խրատները: Գրիգոր Աբայանի «Գիրք պատճառաց»-ը որպես մատենագիտական ուղեցույց: Մխիթար Գոշի դավանաբանական («Թուղթ առ Վրացիսն» և այլն) և կանոնական («Դատաստանագիրք») երկերը: Աղոթքները, առակները և խրատները: Դավիթ Քոբայրեցու եկեղեցաբանական երկերը, պատճառները և յուժմունքները: Հովհաննես Վանական Տավուշեցու դավանաբանական, եկեղեցաբանական և տոմարական երկերը: Եկեղեցաքաղաքական գործունեությունը: Հակոբ Կոլայեցու պայքարը եկեղեցու ինքնության համար: Լուծմունքները: Գրիգոր Սկևռացու խրատները, ճառերը, ներբողները, քարոզները և այլն: Հովհաննես Գառնեցու խրատները, երրորդաբանական և հրեշտակաբանական վարդապետությունը: Մխիթար Սկևռացու, Վահրամ Բաբունու, Հովհաննես Երզնկացի-Պլուզի և Գևորգ Սկևռացու երկերը և ճառերը: Ստեփանոս Օրբելյանի եկեղեցաքաղաքական և մշակութային գործունեությունը: Մատենագրությունը: Գրիգոր Անավարզեցու ճառերը և ներբողները, շարականները: Մխարարական տարրերը դրանց մեջ: Մովսես Երզնկացու դավանաբանական երկերը: Մխիթար Սասնեցու աստվածաբանական և դավանաբանական ճառերը, մանկավարժական և քարոզչական գործունեությունը: Եսայի Նչեցու, Հովհաննես Ծործորեցու, Տիրատուր Կիլիկեցու և Կիրակոս Երզնկացու մատենագրության աստվածաբանական արժեքը: Հովհաննես Որոտնեցու կրթամշակութային գործունեությունը, աստվածաբանական, փիլիսոփայական և ճառախոսական երկերը: Գրիգոր Տաթևացու աստվածաբանական-դավանաբանական երկերը, քարոզները:

-Ուշ միջնադարի հայ եկեղեցական մատենագրությունը. Մատթեոս Ջուղայեցու և Գևորգ Երզնկացու քարոզները: Առաքել Սյունեցու մատենագրության («Աղամգիրք», «Դրախտագիրք», փիլիսոփայական երկեր, քարոզներ, տաղեր և այլն) աստվածաբանական արժեքը: Առաքել Բաղիշեցու մատենագրությունը: Հակոբ Ղրիմեցու տոմարական երկերը: Ղուկաս Լոռեցու քարոզները: Ստեփանոս Լեհացու «Բանք իմաստասիրականք...» երկը, հակաճառական, մեկնաբանական և թարգմանական գործերը: Ներսես Մոկացու մատենագրությունը: Հովհաննես Մրքուզ Ջուղայեցու եկեղեցաքաղաքական գործունեությունը և աստվածաբանական («Դավանություն հավատոյ», «Աստվածաբանություն», «Վիճաբանություն ընդ պատրի Էլիային» և այլն) ժառանգությունը: Ալեքսանդր Ջուղայեցու պատմահակաճառական երկերը: Հակոբ Նայանի աստվածաբանական-դավանաբանական («Վեմ հավատոյ», «Գիրք քրիստոնեական», «Գիրք կոչեցեալ Ճրագ ճշմարտության», Նարեկյուժմունք) երկերը: Միմեոն Երևանցու «Գիրք աղօթից», «Տօնացոյց», «Տաղարան», «Պարտավճար», «Չամբո», «Մեկնություն Հայտնության», «Քարոզգիրք» և այլ երկերը: Դավանական նպատակներով լատիներենից կատարված ԺԳ.-ԺԹ. դարերի աստվածաբանական երկերի թարգմանությունները:

-Հայ մեկնողական գրականության սկզբնավորումը և ծավալումը. ինքնուրույն մեկնողական գրականության սկզբնավորումը և հարաբերությունը Ալեքսանդրիայի, Անտիոքի, ասորական և եփեսոսյան դպրոցների մեկնողական ավանդույթների հետ: Ե. դարի հայրախոսական-մեկնողական գրականությունը: Մեկնության եղանակների (տառացի կամ այլաբանական) ընտրությունը: Վաղ շրջանի հայ մեկնողական գրականությունը. Եղիշեի և Համամ Արևելցու մեկնողական աստվածաբանությունը: Ատոմ Անձևացու ներբողականը: Հովհաննես Սյունեցու ճառերը: Տիրանուն վարդապետ: Միմեոն Աղձնեցու ճառերը: Ժ. - ԺԳ. դարերի Հայ մեկնաբանական գրականությունը: Գրիգոր Նարեկացու, Հովհաննես Կոզեռն Տարոնեցու, Անանիա Սանահնեցու, Արիստակես Լաստիվերցու և Պողոս Տարոնացու մեկնողական երկերը: Ներսես Ծնորհալու («Մեկնութիւն Մատթէի», «Մեկնութիւն Բարձրացուցեքի»), Սարգիս Ծնորհալու, Ներսես Լամբրոնացու մեկնողական ժառանգությունը: Սարգիս Կունդի խմբագիր մեկնությունները: Հովհաննես Մուշի որդու «Մեկնութիւն Եսայեայ» երկը: Հայ մեկնաբանական գրականությունը ԺԴ.-ԺԵ. դարերում: Ավետարանների մեկնությունները: Վարդան Արևելցու սուրբգրային մեկնությունները և «Լուծմունք ի Սուրբ Գրոց» («Ժղանք») ժողովածուն: Նրա հիմնած մեկնաբանական դպրոցը: Մխիթար Գոշի և Վանական Վարդապետ Տավուշեցու մեկնաբանական երկերը: Գևորգ Սկևռացու, Եսայի Նչեցու և Հովհաննես Ծործորեցու մեկնությունները: Տաթևի դպրոցի և Մատթեոս Չուղայեցու մեկնաբանական ժառանգությունը: Գրիգոր Խլաթեցու (Ծերենց) «Մեկնություն Արարածոց»-ը: Թովմա Մեծոփեցու «Մեկնութիւն Դանիէլի»: Հայ մեկնաբանական գրականությունը ԺԸ.-ԺԹ. դարերում: Հակոբ Նայյանի և Պետրոս արք. Բերթումյանի մեկնողական երկերը:

-Հայ ծիսաստվածաբանական մատենագրությունը. Սահակ Պարթևի շարականները և ծիսական մատենագրության բովանդակությունը: Ս. Մեսրոպ Մաշտոցի շարականների վարդապետական բովանդակությունը և կապը հայրախոսական ավանդույթի հետ: Մողմոն Մաքենացին և «Տօնական» ճառընտիր ժողովածուի կազմումը: Թեոդորոս Բոթենավորի «Վարդավառի» ճառը: Անանիա Ծիրակացու շարականները: Ս. Հովհան Օձնեցու ծիսաստվածաբանական մատենագրությունը: Ս. Իսաչին նվիրված Սահակ Ձորափորեցու շարականները: «Մաշտոց» ծիսամատյանի խմբագրում-կազմումը: Պատարագի Խոսրով Անձևացու մեկնությունը: Հովհաննես Սարկավագի շարականները և տաղերը: Ներսես Ծնորհալու շարականները: Ներսես Լամբրոնացու ծիսաստվածաբանական երկերը և «Պատարագի մեկնությունը»: «Տոնապատճառ» ժողովածուի Վարդան Արևելցու խմբագրությունը: Հովհաննես Երզնկացի-Պյուզի, Գրիգոր Անավարզեցու, Մովսես Երզնկացու և Հովհաննես Արճիշեցու ծիսաստվածաբանական երկերը: Գրիգոր Տաթևացու ծիսաստվածաբանական ըմբռնումները: Գրիգոր Խլաթեցու (Ծերենց) ծիսական երկերը, թղթերը, «Հայսմավուրք» և «Գանձարան» ժողովածուների խմբագրումը: Գևորգ Երզնկացու ծիսաստվածաբանական երկերը: Ծիսական բնագրերի Թովմա Մեծոփեցու և Ալեքսանդր Չուղայեցու մշակումները: ԺԳ.-ԺԹ. դարերի ծիսաստվածաբանական թարգմանական գրականությունը:

-Հայոց ծիսաստվածաբանական ժողովածուները. ծիսամատյանների ձևավորման հիմքերը: Հայոց Եկեղեցու Ժամագրքի (Աղոթամատույցի) կազմավորումը և ինքնատիպությունը: Մայր (Ատենի) ժամագիրք և նրա կառուցվածքը: Ժամագրքի հրատարակությունները: Խորհրդատետր-պատարագամատույցների հայացումը, խմբագրումը և հատվածների ներմուծումը հայոց Պատարագի մեջ: Հայոց Պատարագի մասերը: Խորհրդատետր-պատարագամատույցների մեկնությունները: Բարսեղ Ճոնի «Ճոնընտիր» ժողովածուն: Շարակնոց (Երաժշտածիսարան, Կցորդարան) ծիսամատյանի

ձևավորումը: Ստեփանոս Սյունեցու «Ութձայն Կանոնները»: «Ձայնքաղ Շարական»: Ճաշոց (Տոնամակ, Տոնանամակ) ծիսամատյանը և Տերունի տոների տարեկան տոնակարգի սահմանումը: Մաշտոց ծիսարան ժողովածուն որպես քրիստոնեական ծիսակարգի կանոնների, հատուկ աղոթքների և օրհնությունների ամբողջացում: Ձևավորումը և անվան ստուգաբանությունը: Մաշտոց ծիսարանի տեսակները: Խառը Մաշտոց ժողովածուների (Մաշտոց-Գանձարան, Մաշտոց-Տաղարան) ձևավորումը: Տոնացույցը («Կանոնք ընթերցուածոց») որպես Հայոց Եկեղեցու տոների օրացուցային կարգի և արարողությունների կատարման ցուցումներ պարունակող ծիսամատյան: «Յոթնեակ ձևի» հաստատումը Ս. Սահակ Ա. Պարթևի կողմից: Հայոց Տոնացույցի ամբողջացումը, տոնական կարգավորումը և խմբագրումը: Հայոց Տոնացույցի կարգավորումը Սիմեոն Երևանցու կողմից: Եկեղեցական տարվա բաժանումներն ըստ Տոնացույցի: Տոնապատճառ ժողովածուի ստեղծումը: Տոնապատճառի բովանդակային ճոխացումը Գրիգորիս Արշարունու, Չաքարիա Ա. Չազեցու և Սամվել Կամրջաձորեցու կողմից: Տոնապատճառի խմբագրությունները ԺԲ.-ԺԳ. դարերում (Վարդան Հաղբատեցի, Վարդան Արևելցի):

-Հայ Եկեղեցու սրբախոսական մատենագրությունը. սրբախոսական գրականության (մարտիրոսաբանության) հիմնական տեսակները (վկայաբանություն, վարք) և ժանրերը (ողբ, տեսիլ, ներբողյան և այլն): «Վարք Սրբոց», «Տոնացույց» և «Ճառընտիր» ժողովածուները: Գրիգոր Ավագ Վկայասեր հայրապետը և Սրբախոսական երկերի հավաքումը: Հայսմավուրք ժողովածուի կազմումը որպես տոնելի սրբերի վարքի և վկայության պատմություն: Սրբոց հիշատակի յոթնեակական (շարժական) և անվանական դրությունը: Գրիգոր Բ. Վկայասերի Հայսմավուրքը: Հայոց Հայսմավուրքի Իսրայել Խաչենցու, Կիրակոս Գանձակեցու, Գրիգոր Է. Անավարզեցու և Գրիգոր Խլաթեցու խմբագրությունները: Վարքագրության բարոյահոգեբանական և բարոյախոսական մոտիվները: Եկեղեցական մատենագրության այս ժանրի գլխավոր և երկրորդական դրվագները, ներբողական և ժողովրդական տիպերը: Ազգային վարքագրության ծավալման հիմնական փուլերը: Ե. դարի թարգմանական («Գիրք Պիտոյից», «Վարք սրբոց Հարանց», «Վկայք Արևելից») և տեղական Վարքագրական երկերը: «Վարք Հիշատակարաններ»: Գրիգոր Բ. Վկայասերի «Տոնամակ» սրբախոսական-արարողական ժողովածուն: Հայոց Եկեղեցու վարքագրական ժանրերը՝ վարքեր և ներբողյաններ, տեղեկատու վարքեր: Շրջանառվող «Վարք-հիշատակարանները»: «Սոփերք Հայկականը» մատենաշարը: Վկայաբանական մատենագրությունը:

Գրականություն

1. **Աբրահամ Չամիհեան**, Հայ գրականության պատմություն, Ա. մաս, Նոր-Նախիջևան, 1914:
2. **Գարեգին վրդ. Չարբեհանալեան**, Հայկական հին դպրություն, Վենետիկ, 1932:
3. **Գարեգին Չարբեհանալեան**, Մատենադարան հայկական թարգմանությունաց նախնեաց, Վենետիկ 1889:
4. **Եղիշե արք. Դուրեան**, Պատմություն հայ մատենագրության, Երուսաղեմ, 1933:
5. **Կ. Հ. Քիպարեան**, Պատմություն հայ գրականության, Վենետիկ, 1992:
6. **Հակոբ Քյոսեյան**, Ներածություն հայ եկեղեցական մատենագրության, Երևան, 2018:
7. **Մանուկ Աբեղյան**, Երկեր, հ. Գ., Երևան, 1968, հ. Դ., Երևան, 1970:
8. **Մատենագիրք Հայոց**, հ. Ա.-ԻԱ., Անթիլիաս-Երևան, 2003-2018:
9. **Նորայր Արք. Պողարեան**, Ծիսագիտություն, Նյու Յորք, 1990:
10. **Նորայր արք. Պողարեան**, Հայ գրողներ, Ե.-ՄԷ. դդ., Երուսաղեմ, 1971:

Օժանդակ գրականություն

1. **Անանիա Սանահնեցի**, Հականառություն ընդդեմ երկաբնակաց, Հ. Քյոսեյան, Անանիա Սանահնեցի, Ս. Էջմիածին, 2000:
2. **Զարարիա ծ. վրդ. Բաղումյան**, Կիրակոս Երզնկացու սուրբ Եւագր Պոնտացու երկերի լուծմունքները, Երևան 2022:
3. **Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության** (աշխատ. Պ. Խաչատրյանի, Հ. Քյոսեյանի), Ս. Էջմիածին, 2003:
4. **Լիակատար վարք և վկայաբանություն Սրբոց** որք կան ի հին Տօնացուցի Եկեղեցույ Հայաստանեայց (ի Հ. Մկրտիչ վրդ. Ավգերեան), Վենետիկ, Ա.-ԺԴ., 1813-1815:
5. **Յովհաննես Սարկավագ**, Յաղագս նշանակի հավատոյ նիկիականն ՅԺԲ-իցն, «Փանձասար», Զ., Երևան, 1996, Էջ 278-297, Է., Երևան, 2002, էջ 332-370:
6. **Վարդան Այգեկցի**, Գիրք հաստատության և Արմատ հավատոյ (աշխատ. Ս. Շահէ քին. Հայրապետեանի, ներածությունը՝ Յ. Քեոսեյանի), Երևան, 1998:
7. **Վարդան Արևելցի**, Ճառք Ներբողեանք (աշխատ. Հ. Քյոսեյանի), Երևան, 2000:
8. **Սոփերք Հայկականք**, Ա.-ԺԹ., Վենետիկ, 1851-1956:
9. Սրբոյն հօրն մերոյ յերանելոյն **Գրիգորի Լուսավորչի** Յանախապատում Ճառք լուսավորք, Էջմիածին, 1884:
10. **Սուրբ Գրիգորի** վարդապետությունը (թարգ. գրաբ., առաջ. և ծանոթ. Ս. Արևշատյանի), Էջմիածին, 2007:
11. **Սուրբ Եղիշե Վարդապետ**, Աստվածաբանական երկեր, Ս. Էջմիածին, 2007:
12. **Տիմոթեոսի եպիսկոպոսապետի** Աղեքսանդրեայ Հականառութիւն առ սահմանյալսն ի ժողովոյն Քաղկեդոնի (ի լոյս ընծ. աշխատ. Կարապետ ծ. վրդ. և Երուանդ վրդ.), Ս. Էջմիածին, 1908:

բ. «Հայրաբանություն»

-Հայրաբանություն: Հայրաբանությունը որպես պատմաստվածաբանական գիտակարգ: «Եկեղեցական հայր», «Եկեղեցական ուսուցիչ» և «Եկեղեցական մատենագիր»: Հայրաբանական գրականության սկզբնակետի ու վերջնասահմանի խնդիրը, մատենագրության ժանրերը, շրջափուլերի ընդհանուր բնութագրությունը:

-Առաքելական Հայրեր. «Առաքելական հայրեր» անվան ստուգաբանությունը: Կղեմես եպս. Հռոմեացու, Իգնատիոս եպս. Անտիոքացու և Պողիկարպոս եպս. Չմյունացու թղթերը և նրանցում արժարժված համայնքային, ծիսական, աստվածաբանական և այլն խնդիրները: Պապիասի «Տերունական խոսքերի բացատրության» պահպանված հատվածների կարևորությունը Նոր կտակարանի ներածության համար: Դիդախե («Վարդապետություն երկոտասան առաքելոց»), Բառնարասի նամակը, Հերմասի «Հովիվ»-ը. ներածական խնդիրները և կարևորությունը:

-Չատագովական գրականություն. Չնավորման նախադրյալները և նպատակները: Հեղինակները (Արիստիդես Աթենացի, Հուստինոս Վկա (Փիլիսոփա), Աթենագորաս Աթենացի, Տատիանոս Ասորի, Մելիտոն Սարդեցի, Թեոփիլոս Անտիոքացի, «Նամակ առ Դիոգնետոս»):

-Հակաճառական գրականություն. հակաճառական գրականության հրապարակ գալու գաղափարական և ներեկեղեցական շարժառիթները: Հեղինակները (Հեգեսիպպոս, Դիոնիսիոս Կորնթացի, Իրինեոս Լիոնացի, Հիպպոլիտոս Բոստրացի):

-Գ. դարի Արևելյան հայերը և մատենագիրները. Արևելքի աստվածաբանական նշանավոր կենտրոնները՝ Ալեքսանդրիա, Անտիոք, Պաղեստինյան Կեսարիա:

-Կղեմես Ալեքսանդրացի. կյանքը, մատենագրության հանրագիտարանային բնույթը, վարդապետական հայեցակարգերը:

-Որոգիներ. նպաստը համաշխարհային քաղաքակրթությանը, կյանքը, մատենագրությունը: Աստվածաբանական համակարգը: Որոգիներասականություն և նրա պատմական ընթացքը:

-Դիոնիսիոս Ալեքսանդրացի. ընդհանրական եկեղեցու առջև ծառայած խնդիրների ուղղադավան լուծումները, մատենագրությունը:

-Գրիգոր Սքանչելագործ Նեոկեսարացի. կյանքը և մատենագրությունը:

-Մերթողիոս Պատարացի (Լիկիացի). ինքնության և կենսագրության հետ կապված խնդիրները: Մատենագրությունը:

-Գ. դարի լատին հայերը և մատենագիրները. Արևմուտքի աստվածաբանական կենտրոնները՝ Կարթագեն, Հռոմ:

-Տերտուլիանոսը և լատինալեզու աստվածաբանության համակարգումը: Կյանքը: Մատենագրական ժառանգությունը: Ուսմունքը:

-Ս. Կիրիանոս Կարթագենացի. նվիրապետական և մատենագրական գործունեությունը: Վարդապետությունը:

-Ալեքսանդրյան հայերը՝

Աթանաս Ալեքսանդրացի (293-375). կյանքը, մատենագրությունը, ուսմունքը, մատենագրության հայերեն թարգմանությունը:

Դիդիմոս Ալեքսանդրացի (Կույր) (~313-398). կյանքը, մատենագրությունը, ուսմունքը, մատենագրության հայերեն թարգմանությունը:

Կյուրեղ Ալեքսանդրացի (~376-~444). կյանքը, մատենագրությունը, ուսմունքը, մատենագրության հայերեն թարգմանությունը:

-Անապատական հայերը՝

Անտոն Մեծ († 356), Մակար Եգիպտացի (300-390), Իսիդորոս Պեղուսացի (~360-436/449/50), Ծենուրեն Ատրիպացի († 466) և մյուսները:

Եվագր Պոնտացի (346-399). կյանքը, մատենագրությունը՝ նրա և Նեղոս Սինայեցու անվամբ պահպանված, խորհրդապաշտությունը, մատենագրության հայերեն թարգմանությունը:

-Կապադովկյան հայերը՝

Բարսեղ Կեսարացի (329-379). կյանքը, մատենագրությունը, ուսմունքը, մատենագրության հայերեն թարգմանությունը:

Գրիգոր Նազիանզացի (328-389/90). կյանքը, մատենագրությունը, ուսմունքը, մատենագրության հայերեն թարգմանությունը:

Գրիգոր Նյուսացի (335-394). կյանքը, մատենագրությունը, ուսմունքը, մատենագրության հայերեն թարգմանությունը:

-Առաջավոր Ասիական ընդհանրական հայերը՝

Եփրեմ Ասորի (~306-~372/3). կյանքը, մատենագրությունը, ուսմունքը, մատենագրության հայերեն թարգմանությունը:

Կյուրեղ Երուսաղեմացի (~315-387). կյանքը, մատենագրությունը, ուսմունքը, մատենագրության հայերեն թարգմանությունը:

Եպիփան Կիպրացի (315-403). կյանքը, մատենագրությունը, մատենագրության հայերեն թարգմանությունը:

Հովհան Ոսկեբերան (347-407). կյանքը, մատենագրությունը, ուսմունքը, մատենագրության հայերեն թարգմանությունը:

-Արևմտյան հայրեր՝

Ամբրոսիոս (340-397). կյանքը, մատենագրությունը, մատենագրության հայերեն թարգմանությունը:

Հերոնիմոս (~347-419/20). կյանքը, մատենագրությունը, մատենագրության հայերեն թարգմանությունը:

Օգոստինոս (354-430). կյանքը, մատենագրությունը, ուսմունքը, մատենագրության հայերեն թարգմանությունը:

Գրականություն

ա) դասագրքեր

1. **Եզնիկ արք. Պետրոսյան**, Հայրաբանություն, Նախանիկիական շրջան, Բ. տպ., Երևան, 2017:
2. **Եզնիկ արք. Պետրոսյան**, Հայրաբանություն, Դ. դար, Երևան, 2018:
3. **Իոհան ավագերեց Մեյենդորֆ**, Ներածություն հայրախոսական աստվածաբանության, Ս. Էջմիածին, 2013:
4. **Հակոբ Քյոսեյան**, Եկեղեցու հայրեր, վարդապետներ (IV-VIII դդ.), Երևան, 2020:
5. **Арх. Филарет**, Историческое учение об отцах церкви, М., 1996.
6. **Карсавин Л. П.**, Святые отцы и учителя церкви. Изд. Московского университета, 1994.
7. **Прот Г. Флоровский**. Восточные отцы церкви, М., 2003.
8. **Сагарда Н. И., Сагарда А. И.** Полный корпус лекций по патрологии, СПб., 2004.
9. **Сидоров А. И., Доброцветов П. Л., Фокин А. Р.**, Патрология, Том 1, Церковная письменность доникейского периода, Москва, Познание, 2019.
10. **Фокин А. Р.**, Латинская патрология, Том 1, Период первый, Доникейская латинская патрология (150-325 гг.), Москва, 2005.
11. **Johannes Quasten**. Patrology. Vol. I: The Beginnings of Patristic Literature From the Apostles Creed to Irenaeus; vol. II: The Ante-Nicene Literature after Irenaeus; vol. III: The Golden Age of Greek Patristic Literature From the Council of Nicaea to the Council of Chalcedon; vol. IV: The Golden Age of Latin Patristic Literature From the Council of Nicaea to the Council of Chalcedon, Christian ClassicsTM, Allen 1995.

բ) սկզբնաղբյուրներ

1. **Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ** հայրապետի ճառք, թուղթք և ընդդիմացությունք, Վենետիկ, 1899:
2. **Աթանաս Աղեքսանդրացի**, Սաղմոսների մեկնություն (թարգմ.՝ Մ. Ղազարյանի), Երևան, 2000:
3. **Ս. Բարսեղ Կեսարացի**, Գիրք պահոց (աշխատ.՝ Կ. Մուրադյանի), Ս. Էջմիածին, 2008:

4. **Քարսեղ Կեսարացի**, Յաղագս վեցավեցյալ արարչության (աշխատ.՝ Կ. Մուրադյանի), Երևան, 1984:
5. **Գիրք պարապմանց սրբոյն Կյուրղի եպիսկոպոսի Աղէքսանդրու** Հայրապետի, Յաղագս մարդանալոյ Միածնին, Կ. Պօլիս, 1717:
6. **Գրիգոր Նյուսացի**, Մովսէսի կյանքը (թարգ. ֆրանս.՝ Պ. Շահբազյանի), Ս. Էջմիածին, 2008:
7. **Գրիգոր Նյուսացի**, Տեսությունն ի մարդոյն կազմությունն (Յաղագս կազմության մարդոյ), /քնն. բնագր., առաջար. և ծանոթագր.՝ Ս. Վարդանյանի/, Ս. Էջմիածին, 2008:
8. **Գրիգոր Նյուսացի**, Քրիստոնէական (թարգմ. ֆրանս.՝ Պ. Շահբազյանի), Էջմիածին, 2007:
9. **Մուրբ Եպիփան Կիպրացի**, Ճառք (աշխատ.՝ Հ. Քյոսեյանի), Ս. Էջմիածին, 2013:
10. **Եվսեբիոսի Կեսարացոյ Պատմություն Եկեղեցոյ** եղեալ յատուրոցն ի հայ ի հինգերորդ դարու, Վենետիկ, 1877:
11. **Սրբոյն Եփրեմի մատենագրությունք**, հ. 1-4, Վենետիկ, 1836:
12. **Եփրեմ Ասորի**, Հորդորակ ապաշխարության. Չորավոր աղոթք (Բ. հրատ., գրաք. փոխադր. Տ. Խաչատրյանի), Երևան, 2005:
13. **Եփրեմ Խուրի Ասորի**, Ճառ քառասնօրյա տիրոջ տանար գալու և Սիմեոն ծերունու մասին (Բ. հրատ., թարգ.՝ Ա. Մկրտչյանի), Ս. Էջմիածին, 1999:
14. **Եփրեմ Խուրի Ասորի**, Ճառ քառասնօրյա տիրոջ տանար գալու և Սիմեոն ծերունու մասին (թարգմ.՝ Ա. Համբարձումյանի), Ս. Էջմիածին, 1997:
15. **Եփրեմ Ասորի, Ճառքնտիր** (աշխարհաբար փոխադր. Մ. Արաբյանի), Ս. Էջմիածին, 2010:
16. **Ընթերցումներ Եկեղեցու հայրերի և վարդապետների մատենագրությունից** (հրատ. պատր.՝ Հ. Քյոսեյան), Երևան, 2008:
17. **Թուղթք Սրբոյն Իգնատիոսի Աստվածազգեաց մարտիրոսի** Անտիոքայ եպիսկոպոսի, Կ. Պոլիս, 1783:
18. **Մուրբ Իգնատիոս Աստվածազգեաց**, Թղթեր, Երևան, 2003:
19. **Ս. Կիպրիանոս Կարթագենացի**, Գիրք Եկեղեցու միասնության մասին, Ս. Էջմիածին, 2007:
20. **Մուրբ Կյուրեղ Երուսաղեմացի**, Կոչումն ընծայության (թարգ.՝ Ս. Կրկյաշարյանի), Ս. Էջմիածին, 2007:
21. **Ս. Հովհան Ոսկերեբան**, Ասույթներ Աստծու և հավատքի մասին (թարգմ.՝ Ս. Պողոսյանի), Երևան, 1998:
22. **Ս. Հովհան Ոսկերեբան**, Ճառերի ընտրանի (2-րդ վերանայված հրատ., թարգմ.՝ Թ. Խաչատրյանի), Էջմիածին, 2009:
23. **Ս. Յովհան Ոսկերեբան**, Ա. Ճառք Բ. Նշխարք ի մեկնությանց Ս. Գրոց, (աշխատ.՝ Հ. Քյոսեյանի), Էջմիածին, 2008:
24. **Ս. Հովհան Ոսկերեբան**, Ճառեր-Բ. (թարգմ. Գրաբարից՝ Մ. Արաբյանի), Էջմիածին, 2009:
25. **Ս. Հովհան Ոսկերեբան**, Ներբող Մուրբ Գրիգոր Լուսավորչին (թարգմ.՝ Հ. Պետրոսյանի), Էջմիածին, 1998:
26. **Որոգինես, Աղոթքի մասին** (թարգ. ֆրանս.՝ Պ. Շահբազյանի, առաջաբանը՝ Ե. արք. Պետրոսյանի), Էջմիածին, 2007:
27. **Մուրաա Սքուաստիկոս**, Եկեղեցական պատմություն, Վաղարշապատ, 1897:
28. **Օգոստինոս Երանելի**, Խոստովանություններ (թարգմ.՝ Խ. Գրիգորյանի), Երևան, 2002:

29. **Св. Ирений Лионский.** Творения. М., 1996.
30. **Писания мужей апостольских** (предисл. Р. В. Светлова), СПб., 2007 (կամ համապատասխան հայերեն հրատարակությունները):
31. **Alexander Roberts and James Donaldson** (ed.). The Ante-Nicene Fathers: The Writings of the Fathers Down to A.D. 325, Vol. 1-9, Peabody, 1995.
32. **Philip Schaff** (ed.). Nicene and Post-Nicene Fathers: First Series, Vol. 1-14, Peabody, 1999.
33. **Philip Schaff and Henry Wace** (ed.). Nicene and Post-Nicene Fathers: Second Series, Vol. 1-13, Peabody, 1995.

գ) «Գանձասար» աստվածաբանական հանդես

1. **Առաքյալների հետևորդ սուրբ Իրենեոսի վկայաբանությունը**, «Գանձասար» (Աստվածաբանական հանդես), Է., Երևան, 2002, էջ 411-415:
2. **Բառնարասի նամակը**, «Գանձասար» (Աստվածաբանական հանդես), Ը., Երևան, 2010, էջ 161-210:
3. **Զմյուռնիայի եպիսկոպոս և սուրբ նահատակ սուրբ Պողիկարպոսի նամակը փիլիպպեցիներին**, «Գանձասար» (Աստվածաբանական հանդես), Է., Երևան, 2002, էջ 164-177:
4. **Կիպրիանոս եպիսկոպոսի և Հուստիանե կույսի վկայաբանությունը**, «Գանձասար» (Աստվածաբանական հանդես), Ը., Երևան, 2010, էջ 600-610:
5. **Կղեմեսի առաջին նամակը կորնթացիներին**, «Գանձասար» (աստվածաբանական հանդես), Ե., Երևան, 1994, էջ 114-136, Զ., Երևան, 1996, էջ 203-227
6. **Հռոմի եպիսկոպոս Սուրբ Կղեմեսի Բ. նամակը կորնթացիներին**, «Գանձասար» (աստվածաբանական հանդես), Ը., Երևան, 2010, էջ 211-230:
7. **Սուրբ Պողիկարպոսի վկայաբանությունը**, «Գանձասար» (Աստվածաբանական հանդես), Է., Երևան, 2002, էջ 178-187:
8. **Տասներկու առաքյալների վարդապետությունը**, «Գանձասար» (Աստվածաբանական հանդես), Է., Երևան, 2002, էջ 138-160 (Վարդապետություն ՇԲ. Առաքելոց կամ Վարդապետություն Տեառն երկոտասն առաքելովք յազգս, Կ. Պոլիս, 1898):

դ) լրացուցիչ գրականություն

1. **Հ. Գարեգին Չարրհանալեան**, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ 1889:
2. **Հ. Գարեգին Չարրհանալեան**, Պատմություն մատենագրության Յունաց, հռոմեացուց և հարց եկեղեցւոյ ի պէտս ուսման ազգային վարժարանաց, Վենետիկ, 1856:
3. **Антология: Отцы и учителя церкви III в.**, В 2 т. М., 1996.
4. **Архиепископ Филарет (Гумилевский).** Историческое учение об Отцах Церкви. Т. 1-3. Свято-Троицкая Сергиева Лавра, 1996.
5. **Писарев Л. И.** Очерки из истории христианского вероучения патристического периода: Век Мужей Апостольских (I и начало II в.), СПб., 2009.

Գ. ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ա. Ընդհանուր Եկեղեցու պատմություն

-Եկեղեցական պատմության առարկան, մեթոդները և տեղն աստվածաբանության համակարգում:

-Քրիստոնեությունն առաքելական շրջանում: Քրիստոնեությունը հետաառաքելական շրջանում: Առաքելական հայրեր: Քրիստոնեության հալածանքները: Հերետիկոսությունները և պառակտումները Վաղ Եկեղեցու կյանքում:

-Գ. դարի աստվածաբանական-դավանական և եկեղեցական-գործնական վեճերը:

-Քրիստոնեությունը Դ. դարասկզբին: Նիկիայի 325թ. Ա. Տիեզերական ժողովը: Նիկեական մեծ վեճը: Հակահիկեական ընդդիմության ձևավորումը և կանոնական ու դավանական ձեռնարկումները: Եկեղեցու ներքին կյանքը Դ. դարի 60-70-ական թվականներին: Կ. Պոլսի 381թ. Բ. Տիեզերական ժողովը:

-Քրիստոսաբանական վեճերի սկզբնավորումը և ծավալումը: Եփեսոսի 431թ. Տիեզերական ժողովը: Քրիստոսաբանական վեճերը 440-450-ական թվականներին: Քաղկեդոնի ժողովը: Եկեղեցին Չ. դարի առաջին կեսին: Կ. Պոլսի 553 թ. ժողովը: Եկեղեցին միակամության և պատկերամարտական վեճերի շրջանում: Եկեղեցու ներքին կյանքը Թ.-Ժ. դարերում: Քաղկեդոնական եկեղեցու 1054 թ. մեծ պառակտումը:

-Քրիստոնեական Արևելքը եկեղեցական մեծ պառակտումից հետո (ԺԱ. դարի երկրորդ կես): Ինքնագլուխ և ինքնավար ուղղափառ եկեղեցիներ: Ուղղափառ ինքնագլուխ պատրիարքությունները ԺԱ.-Ի. դարերում: Ռուս ուղղափառ եկեղեցի: Կիպրոսական և Վրացական ուղղափառ եկեղեցիներ: Բալկանյան ուղղափառ եկեղեցիներ: Արևելալավոնական և Ամերիկայի ուղղափառ եկեղեցիներ:

-Քրիստոնեական Արևմուտքը ԺԱ.-ԺԴ. դարերում: Կաթոլիկ Եկեղեցու «մեծ պառակտումը» և հակակաթոլիկյան ռեֆորմացիան: Լյութերականություն: Կալվինականություն: Անգլիկան Եկեղեցի: Կաթոլիկյան ռեֆորմացիա (հակառեֆորմացիա): Կաթոլիկ Եկեղեցին ԺԸ.-ԺԹ. դարերում: Վատիկանի առաջին ժողովը: Կաթոլիկ Եկեղեցին Ի. դարում: Վատիկանի Բ. ժողովը:

Գրականություն

ա) դասագրքեր

1. **Գարեգին վրդ. Սարգիսեան**, Ընդհանուր եկեղեցույ Պատմություն (ձեռագիր):
2. **Երուանդ վրդ. Տեր-Մինասեանց**, Ընդհանուր եկեղեցական պատմություն, Հ. Ա., Հին Եկեղեցին, Ս. Էջմիածին, 1908 (Բ. հրատ., Ս. Էջմիածին, 2013):
3. **Ու. Ուոլքեր**, Ընդհանուր եկեղեցույ պատմություն (թարգ.՝ Նարեկ եպս. Ալեմեզեանի), Անթիլիաս, 2005-2010 (Էլեկտրոնային տարբերակ: A history of the Christian Church (ed. by Williston Walker), 4th ed. New York, 1985):
4. **Болотов В. В.**, Лекции по истории древней Церкви. Т. II / История Церкви в период до Константина Великого. М., 1994: Т. IV / История Церкви в период Вселенских Соборов. М., 1994.
5. **Ярослав Пеликан**, Христианская традиция. История развития вероучения. Том 1. (100 - 600), Москва, 2007.

6. **Ярослав Пеликан**, Христианская традиция. История развития вероучения. Том 2. (600-1700), Москва, 2009.
7. **Cambridge History of Christianity**, Vol. 1-9, Cambridge University Press, 2008.
8. **Philip Schaff**. History of the Christian Church. Vol. 2-3, Massachusetts, 1996.

բ) սկզբնաղբյուրներ

1. **Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ Հայրապետի** ճառք, թուղթք և ընդդիմացությունք, Վենետիկ, 1899:
2. **Բառնարասի նամակը**, «Գանձասար» (Աստվածաբանական հանդես), Ը., Երևան, 2010, էջ 161-210:
3. **Գիրք պարապմանց սրբոյն Կյուրղի եպիսկոպոսի** Աղեքսանդրու Հայրապետի, Յաղագս մարդանալոյ Միածնին, Կ. Պոլիս, 1717:
4. **Եվսեբիոսի Կեսարացոյ Պատմություն Եկեղեցոյ** (հրատ. Արրահամ Ճարեան), Վենետիկ, 1877:
5. **Ս. Կիպրիանոս Կարթագենացի**, Գիրք Եկեղեցու միասնության մասին, Էջմիածին, 2007:
6. **Կղեմեսի առաջին նամակը կորնթացիներին**, «Գանձասար» (աստվածաբանական հանդես), Ե., Երևան, 1994, էջ 114-136, Զ., Երևան, 1996, էջ 203-227, **Հռոմի եպիսկոպոս Սուրբ Կղեմեսի Բ. նամակը կորնթացիներին**, «Գանձասար» (աստվածաբանական հանդես), Ը., Երևան, 2010, էջ 211-230:
7. **Ս. Կյուրեղ Երուսաղեմացի**, Կոչումն ընծայության, Ս. Էջմիածն, 2007:
8. **Հերմաս**, Հովիվ, Ս. Էջմիածն, 2000:
9. **Ղուկաս Ավետարանիչ**, Առաքելական կանոններ, Երևան, 1995:
10. **Սուրբ Սրբուստիկոս**, Եկեղեցական պատմություն, Վաղարշապատ, 1897:
11. **Վարդապետություն ԺԲ. Առաքելոց** կամ Վարդապետություն Տեառն երկոտան առաքելովք յազգս, Կ. Պոլիս, 1898:
12. **Свт. Афанасий Великий. Творения в четырех томах.** Т. I, М., 1994, с. 191-268; 287-444; Т. II, М., 1994, с. 176-494; Т. III, М., 1994, с. 3-92; 175-178, 251-311; Т. IV, М., 1994, с. 455-476, 477-479.
13. **Деянія Вселенских Соборовъ.** Т. I / I, II, III Соборы. СПб., 1996.
14. **Деянія Вселенских Соборовъ.** Т. IV / VI, VII, VIII Соборы. СПб., 1996.
15. **Евагрий Схоластик.** Церковная История (пер. с греч., вст. статья, комм. и прилож. И. В. Кривушина). СПб., 1999.
16. **Свт. Григорий Нисский.** Избранные произведения. М., 2007.
17. **Свт. Григорий Богослов.** Избранные творения. М., 2008.
18. **Созомен Эрмий Саламинский.** Церковная история. СПб., 1851.
19. **Феодорит еписк. Кирский.** Церковная история. СПб., 1852.24.
20. **Kelly J. N. D.** Early Christian Doctrines. London, 1965.
21. **Kelly J. N. D.** Early Cristian Creeds. New York, 1993.

զ) հանրագիտարաններ, վավերագրերի ժողովածուներ, և տեղեկատու գրականություն

1. **Քրիստոնեա Հայաստան**. հանրագիտարան, Երևան, 2002 (ծրագրային թեմաներին առնչվող հոդվածները)
2. **Католическая энциклопедия**. Т. I, М., 2002, Т. 2, М., 2005, Т. 3, М., 2007 (ծրագրային թեմաներին առնչվող հոդվածները):
3. **Православная Энциклопедия**. Т. 1-20, М., 2000-2013 (ծրագրային թեմաներին առնչվող հոդվածները):
4. **Христианство: Энциклопедический словарь**. Т. 1, М., 1993; Т. 2, М., 1995; Т. 3, М., 1995 (ծրագրային թեմաներին առնչվող հոդվածները):
5. **Encyclopaedia of Religion and Ethics** (ed. by James Hastings). Vol. 1-10, New-York, 1964.
6. **Realencyklopaedie fur protestantische Theologie und Kirche** (Begr. von J.J. Herzog./ Hrg. von Albert Hauck). Bd. 1-13, Leipzig, 1904.

դ) լրացուցիչ գրականություն

1. **Արշակ Տեր-Միքելեան**, Հայաստանեայց եկեղեցին և Բյուզանդեան ժողովոց պարագայք, Մոսկուա, 1892:
2. **Գրիմայեր Ա.**, Քաղկեդոնի ժողովը. ընդհարման մի վերլուծություն/«Գանձասար» (Աստվածաբանական հանդես), Չ., Երևան, 1996, էջ 11-43:
3. **Եզնիկ եպս. Պետրոսյան**, Հայրաբանություն, Ս. Էջմիածին, 1996, էջ 36-62, 234-288:
4. **Երուանդ վրդ. Տեր-Մինասեանց**, Հայոց Եկեղեցու հարաբերությունները Ասորոց եկեղեցիների հետ (հայկական և ասորական աղբյուրների համաձայն), Ս. Էջմիածին (Բ հրատ.), Մայր Աթոռոյ սպ., 2009:
5. **Երվանդ Տեր-Մինասյան**, Նեստորականությունը Հայաստանում 5-6 դարերում, Երևան, 1946:
6. **Երվանդ Տեր-Մինասյան**, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Երևան, 1968:
7. Ընդհանրական թուղթ Սրբոյն **Ներսիսի Ծնորհալոյ**, Յերուսաղէմ, 1871:
8. **Մեսրոպ, քին. Արամեան**, Երեք Տիեզերական ժողովների դավանությունը (Աստվածաբանական ակնարկ) / «Գանձասար» (Աստվածաբանական հանդես), Ա., Երևան, 1992, էջ 110-140:
9. **Гергей Е.**, История папства. М., 1996.
10. **Документы Второго Ватиканского Собора**. М., 1998.
11. **Иоанн Павел II**. Апостольское послание "Свет Востока" // "Вопросы философии", 1996, № 4.
12. **Иоанн Павел II**, Вера и разум. Энциклика. М., 1999.
13. **Катехезис Католической Церкви**. М., 1996.
14. **Католичество** (Религии мира). Минск, 2006.
15. **Ковальский Н. А.** Папы и папство (пер. с польск.). М., 1991.
16. **Лозинский С. Г.** История папства. М., 1961.
17. **Овсиенко Ф. Г.** Католицизм. М., 2005.

18. **Поснов М. Э.** История Христианской Церкви (до разделения церквей – 1054 г.). Брюссель, 1964.
19. **Протестантство** (Религии мира). Минск, 2006.
20. **Скурат К. Е.,** История Поместных Православных Церквей. Т. I-II, М., 1994.

բ. «Հայոց Եկեղեցու պատմություն»

-Քրիստոնեության մուտքը Հայաստան (առաքելական դարաշրջան).
Քրիստոնեությունը Հայաստանում Ա. - Գ. դարերում. «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկան, Ս. Թադևոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների քարոզչությունը հայոց մեջ. եպիսկոպոսական Աթոռ(ներ)ի հիմնումը: Առաքելական քարոզչության ավանդությունների պատմականությունը: Ոսկյանց և Սուրբիասյանց, Թեոդորոս Սալահունու վկայաբանությունները: Մերուժան Հայոց եպիսկոպոս:

-Քրիստոնեությունը Հայաստանի պետական կրոն: Հայոց Եկեղեցին Դ. դարում.
